ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 սեպտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

123
(2789)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽԱՅՏԱՌԱԿ ԻՐԱՎԻՃԱԿ. ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԵՐԹԵՐ ԵՆ ԳՈՅԱՑԵԼ

Անձնագրի վավերացում/Ելքի վիզա

ՀՀ մուտքի վիզայի տրամադրում/
երկարաձգում

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ հրապարակել էր հոդված՝ վիզա ստանալու հերթերի առաջացրած անհարմարությունների մասին: Մասնավորապես, շատ քաղաքացիներ, որոնք ցանկանում են ամենատարբեր նպատակներով մեկնել Հայաստանից, բախվում են վիզա ստանալու հերթերի եւ արժանապատվությունը նսեմացնող երեւույթների: Թե ինչեր են կատարվում վիզա կենտրոնների այս անսկիզբ ու անվերջ հերթերի հետեւում, «Ժողովուրդ» օրաթերթն արդեն գրել է, սակայն ինչ է անում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իր քաղաքացիների իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու համար, դեռ բացահայտված չէ: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում ուղարկեց ՀՀ ԱԳՆ՝ճշտելու, թե 4-5 ամիս «անշարժ» մնացող հերթերում սպասող քաղաքացիների խնդիրների լուծման, մասնավորապես՝ վիզաների տրամադրման գործընթացը հեշտացնելու եւ արժանապատիվ լուծում տալու համար ինչ գործուն քայլեր է անում ԱԳՆ-ն: Հարցմանն ի պատասխան՝ մեզ Արտաքին գործերի նախարարությունից տեղեկացրին, որ օտարերկրյա պետությունների կողմից մուտքի վիզաների տրամադրումը հանդիսանում է «Հյուպատոսական կապերի մասին Վիեննայի կոնվենցիայի» 5-րդ հոդվածով սահմանված հիմնական գործառույթներից մեկը, որն իրականացնելիս դեսպանություններն առաջնորդվում են իրենց երկրների օրենսդրությամբ, եւ որեւէ երկրի արտաքին գերատեսչություն իրավասու չէ միջամտելու այդ գործընթացին եւ անմիջական վերահսկողություն իրականացնելու լծակներ չունի:

«Այնուամենայնիվ, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ցանկացած պատեհ առիթով բարձրացնում է խնդրո առարկա թեման, որը հիմնականում վերաբերում է եվրոպական երկրների՝ մուտքի վիզաների տրամադրման ծառայությանը (այցելության օր ամրագրելը)՝ քաղաքացիներին առավել մատչելի, այսինքն՝ խելամիտ ժամկետում հասանելի դարձնելու համատեքստում: Վերոնշյալ հարցը բազմիցս քննարկվել է թե՛ ԵՄ կողմի եւ թե՛ ԵՄ անդամ երկրների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ ս.թ. մարտի 23-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանի եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ ՀՀ գերատեսչությունների գործընկերների հետ համատեղ հանդիպման ընթացքում: Ըստ նախարարության դիտարկումների եւ դեսպանությունների կողմից ներկայացվող հիմնավորումների, որոնք հիմնականում հաստատվում են պաշտոնական վիճակագրության տվյալներով, խնդիրները հիմնականում ծագում են ոչ թե մուտքի վիզա ստանալիս ընթացակարգերի, այլ ժամադրության օր ամրագրելու քայլում, որը, հետքովիդային ժամանակաշրջանից սկսած (2022թ. գարուն-ամառ), էապես վատթարացել է դիմորդների կտրուկ աճի պատճառով: Համաձայն պաշտոնական վիճակագրության՝նախորդ համադրելի տարիների (2018, 2019) համեմատ՝մի շարք եվրոպական երկրների կողմից շենգենյան մուտքի վիզա տրամադրելու դիմումների քանակն աճել է 40-50 եւ ավելի տոկոսով, որին ոչ բոլոր դեսպանություններն են պատրաստ եղել իրենց կարողություններով եւ մարդկային ռեսուրսներով: Որոշ դեսպանությունների հաջողվել է ժամադրությունների ընթացակարգը բարելավել, որոշներին՝ ոչ այնքան: Հատկանշական է, որ ԵՄ անդամ երկրների դեսպանությունների աշխատակիցների համար հարցը նույնպես մեծագույն մտահոգության առարկա է: Միեւնույն ժամանակ ԵՄ անդամ երկրների ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնել ջանքեր գործադրելու վերոնշյալ պայմանների բարելավման ուղղությամբ: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել խնդրո առարկա թեման եւ իր իրավասությունների շրջանակներում շարունակելու է հետեւողական լինել՝ վիզաների տրամադրման գործընթացների բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում»:

Այս երկարաշունչ պատասխանը ենթադրում է՝դեսպանատների առջեւ ամբոխի նմանվող հերթերի, դրանց վերահսկողության ու կարգավորման հարցում ՀՀ ԱԳՆ-ն, մեծ հաշվով, իրավասություն չունի. միջազգային օրենսդրությունն է գործում: Հետաքրքիր է՝ինչու այդ դեպքում Հայաստանում էլ չի գործում ՀՀ օրենսդրությունը նույն ուժգնությամբ եվրոպացիների նկատմամբ՝բալանսավորելու իրավիճակը:

Ակնհայտ է, որ վիզա ստանալու համար ՀՀ քաղաքացին բազմակի անգամ նվաստանում է օտարերկրյա դեսպանություններում, եւ Նիկոլ Փաշինյանի իշխանությունն անկարող է լուծել այդ նվաստացման հարցը: Սա ազգային արժանապատվության հարց է:

Հայաստանի գործադիր մարմնում ավագանու ընտրություններից հետո պաշտոնանկությունների տեսքով մի շարք փոփոխություններ են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում նախատեսվում են մի քանի «կարկառուն» նախարարների հրաժարականները: Ըստ ՔՊ ներսում շրջանառվող տեղեկությունների՝ հրաժարական են ներկայացնելու ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը եւ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը: Մեր տեղեկություններով՝ իշխող քաղաքական թիմի ներսում մի քանի թեկնածուների անուններ են շրջանառվում, բայց՝ ընդամենը խոսակցությունների մակարդակով. վերջնական որոշումը կկայացվի ավագանու ընտրություններից հետո: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Գնել Սանոսյանին փոխարինելու է Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Սյունիքի մարզպետի պաշտոնը բաժին կհասնի ՔՊ-ական սյունեցի պատգամավոր Կարեն Համբարձումյանին, որը երկար ժամանակ կատաղի պայքար էր տալիս այդ պաշտոնի համար: Իշխող թիմն այս պահի դրությամբ Հակոբ Սիմիդյանին եւ Գրիգոր Մինասյանին փոխարինող դեռ չունի, բայց մինչ ընտրություն այս հարցն էլ կլուծեն: Ինչ վերաբերում է Գնել Սանոսյանին, ապա, մեր տեղեկություններով, Նիկոլ Փաշինյանը նրա եւ Արմեն Փամբուխչյանի համար նոր՝ «յուղոտ» պաշտոն է մտածել քաղաքապետարանում. նախատեսվում է, որ ավագանու ընտրություններից հետո նրանք պետք է զբաղեցնեն քաղաքապետի տեղակալների պաշտոնները: Սրանք այս պահին իշխանության ներսում եղած տրամադրություններն են, իսկ թե ինչով կավարտվեն գործընթացները եւ հետագա զարգացումները, ցույց կտա ժամանակը: Մենք առաջիկայում կհայտնենք:

Արցախում նախագահի նոր թեկնածուի մասով ակտիվ քննարկումներ են սկսվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի խորհրդարանական խմբակցությունները այս օրերին պարբերաբար հանդիպումներ են ունենում, փորձում են կոնսենսուսային թեկնածու գտնել, բայց դեռ չի հաջողվում այս հարցում համաձայնության գալ. տարբեր անուններ են շրջանառվում, այդ թվում՝ ԱԺ նորանշանակ խոսնակ Դավիթ Իշխանյանինը եւ պետնախարար Սամվել Շահրամանյանինը, բայց դեռ վերջնական թեկնածու չունեն: Ինչպես Արցախի մեր աղբյուրներն են փոխանցում, խորհրդարանական խմբակցությունները հակված են մեկ միասնական թեկնածու գտնել, որպեսզի նոր նախագահի ընտրության հարցն արագ լուծվի, բայց եթե համաձայնության չգան, չի բացառվում, որ խմբակցություններից յուրաքանչյուրն իր թեկնածուին առաջադրի: Նոր նախագահի ընտրության հարցով ԱԺ նիստը պետք է տեղի ունենա այս ուրբաթ՝ սեպտեմբերի 8-ին. սա նշանակում է, որ պատգամավորները քիչ ժամանակ ունեն որոշում կայացնելու համար: Հավելենք, որ, ըստ ԱՀ Սահմանադրության, նախագահը խորհրդարանում ընտրվում է պատգամավորների 2/3 ձայներով: Առաջին փուլով նախագահ չընտրելու դեպքում ամենաշատ ձայնը հավաքած երկու թեկնածուները կանցնեն երկրորդ փուլ. այս դեպքում արդեն ընտրությունն արվում է ձայների պարզ մեծամասնությամբ: Հիշեցնենք, որ Սամվել Շահրամանյանը երկար ժամանակ պաշտոններ է զբաղեցրել Արցախում, համարվում է նախկին նախագահ Բակո Սահակյանի հավատարիմ կադրերից մեկը: Բակո Սահակյանը կարողացավ իր հեղինակության շնորհիվ իրավիճակը վերցնել իր ձեռքը ու այնպես անել, որ Արայիկ Հարությունյանը հրաժարական ներկայացնի:

Թիմային աշխատանքից խոսող Հայկ Մարությանի (որը լքեց Նիկոլ Փաշինյանի թիմը) ներկայիս թիմից մինչեւ ընտրություններ, կարծես թե, թիմ չի մնա: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրար հետ քաղաքական որեւէ կապ չունեցող նախկին քաղաքապետի թիմում արդեն սկսվել է սեւերի եւ սպիտակների բաժանման գործընթացը: Մարությանը անթաքույց ցույց է տալիս, որ ունի իր սիրելիները եւ առանձնապես չի էլ ցանկանում քարոզարշավին տեսնել «Ազգային առաջընթաց» կուսակցությունից իրեն մինչ այս պահը անհայտ սեփական թիմի թեկնածուներին: Աղբյուրի փոխանցմամբ՝ հենց այս կռվախնձորն է եղել պատճառը, որ քարոզարշավը մոտ 6 օր ուշ սկսվեց: Դեռ չձեւավորված թիմը, կարծես թե, սկսում է ճաքեր տալ: Հիմա ասեկոսեներից անցնենք փաստերի. ԿԸՀ կայքից տեղեկանում ենք, որ պայքարի սկզբնամասում Հայկ Մարությանի թիմից, սեփական դիմումի համաձայն, հեռացել են ավագանու երկու թեկնածուներ՝ Ավետիսյան Էլինան եւ Հակոբյան Ժիրայրը: Ինչու՝ հրապարակավ չեն ասում:

ԱՐՑԱԽ

ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Սեպտեմբերի 4-ից Ստեփանակերտում հացի վաճառքը կիրականացվի կտրոնների: Մեկ կտրոնի դիմաց յուրաքանչյուր բաղաքացի կստանա ընդամենը կես կտոր հաց:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական Լուսինե Ղարախանյանը պատմեց, որ դպրոցներ են փակվել, որպեսզի այնտեղ կտրոններ բաժանեն մարդկանց:

-Ոչինչ չի փոխվել, ամեն ինչ նույնն է: Աղ չկա, ալյուր չկա, հաց չկա... Մի քանի դպրոց փակվել են, որպեսզի հացի կտրոններ բաժանվեն:

Այժմ կտրոնային համակարգ է ներդրվում եգիպտացորենի ալյուրի համար, հիմնականում Ստեփանակերտում փակվել են մի քանի դպրոցներ, որպեսզի մարդիկ գան, դպրոցներից կտրոններ ստանան:

-Իսկ նախագահի հրաժարականից հետո այդտեղ ինչ-որ բան փոխվե՞լ է:

-Հիմա կարող եմ մի բառով ասել՝ լռություն է:

-Ո՞վ է այս պահին Արայիկ Հարությունյանի պարտականությունները կատարում:

-Ինքը դեռեւս շենքում է, դեռ նստած է:

-Ազգային Ժողովն արդեն ընդունել է իր հրաժարականը. Դուք տեղեկություններ ունե՞ք, թե ով կարող է լինել հաջորդ նախագահը եւ երբ:

-Ճիշտն ասած՝ ոչ, տեղյակ չեմ:

-Մարդկանց տրամադրվածությունն ինչպիսի՞ն է:

-Մարդիկ ընկճախտի մեջ են, շատ ծանր վիճակ է, տառապալից ապրումների մեջ է Արցախի ժողովուրդը: Սա առավել վատ ձեւով արտահայտվում է հատկապես երեխաների մոտ, որովհետեւ քաղցրավենիքը, շաքարավազը լրիվ վերջացել է, եւ բառի ուղիղ իմաստով չկա ուտելիք, որ ուտեն, գնան դպրոց: Ճաշ կա, նախաճաշ՝ ոչ:

-Կտրոնների տրամադրման գործընթացն արդեն սկսվա՞ծ է:

-Այո, բայց դրանք ցամաք հացերի կտրոններ են, այսինքն՝ շաքարավազ, ձեթ չունենք, չունենք հիգիենայի պարագաներ եւ այլն: Այն էլ խոսքը կես հացի մասին է, նույնիսկ մեկ ամբողջական հաց մենք չենք կարող մեզ թույլ տալ:

-Իսկ այն երիտասարդներից, որոնք Հակարիի կամրջի մոտից առեւանգվել են, որեւէ նորություն կա՞, ինչ-որ փոփոխություն կա՞ այդ մասով:

-Դեռեւս ոչ, սակայն մինչ այժմ եղած՝ իմ իմացած տեղեկությունների վրա հիմնվելով՝ որեւէ փոփոխություն չկա: Նույն պատկերն է, ինչը որ կար:

-Բայց, ամեն դեպքում, նրանց վերադարձնելու գործով բանակցություններ ընթանո՞ւմ են:

-Ամեն դեպքում, այն, ինչ կար, դեռեւս ուժի մեջ է: Խոսքը նրանց Հայաստան արտաքսելու մասին լուրերին է վերաբերում: Նոր տեղեկությունների դեռեւս չեմ տիրապետում:

-Այլ կապի միջոցով նրանց հետ խոսել չի՞ հաջողվել:

-Ցավոք, ոչ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ԳՈՒՄԱՐ՝ ԵՐԹԻ ԳՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կուսակցություններն օգտվում են մարքեթինգային գործակալությունների ծառայություններից՝ գումարի դիմաց մարդկանց ներգրավվելով երթերի եւ քարոզչական թռուցիկների տարածման գործում:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է «Ականատես» դիտորդական առաքելության տարածած հայտարարությունից: Դիտորդական առաքելությունը ներկայացրել է նամակագրության օրինակներ, թե ինչպես է մարքեթինգային ընկերություններից մեկը քարոզչության ժամանակ քայլելու համար հավաքագրում մարդկանց:

Սոցիալական տարբեր ցանցերում քաղաքական երթերին մասնակցելու հայտարարություններ են տարածվում: Մասնավորապես, Promo host գովազդային տեխնոլոգիաների կազմակերպությունն իր ինստագրամյան էջում հավաքագրում է աղջիկների՝ գումարի դիմաց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական երթերին մասնակցելու համար:

Մասնակից աղջիկներին հանձնարարվում է կրել սպիտակ շապիկներ եւ ջինսե տաբատներ: Նույն տեսքով քարոզարշավին մասնակցում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները: Մասնակցել ցանկացողները պետք է նաեւ նախապես ուղարկեն իրենց լուսանկարը կազմակերպչին հաստատում ստանալու նպատակով: Մասնակիցները հրավիրվում են Սայաթ-Նովա 40 հասցեում գտնվող ՔՊ գլխամասային գրասենյակ, որտեղից մեկնարկում են քարոզչական երթերը:

Նշենք, որ մասնակից աղջիկներին 1 ժամվա համար վճարվում է 1000 դրամ փոխհատուցում: Գումարները փոխանցվում են անկանխիկ եղանակով՝ մասնակիցների բանկային քարտերին փոխանցման միջոցով:

Ֆեյսբուքյան խումբը, որն ունի շուրջ 3000 մասնակից, եւս կիրառվում է որպես նմանատիպ հայտարարությունների հարթակ: Մեկ այլ՝ City Promotion մարքեթինգային գործակալությունն այստեղ հավաքագրում է մասնակիցների՝ քարոզչական տարբեր միջոցառումներում թռուցիկների բաժանման, դրոշակների ծածանման համար: Կազմակերպության ներկայացուցչի հետ զրույցում պարզ դարձավ, որ նմանատիպ ծառայություն մատուցում են մի քանի կուսակցությունների համար (կազմակերպությունը խուսափեց անուններ նշելուց): Այս դեպքում եւս մասնակիցներին մեկ ժամվա համար վճարվում է 1000 - 2000 դրամ:

Ականատեսը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ պարզելու համար՝ արդյոք վերը նշված գործողություններն ունեն ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված՝ քայլերթերին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու հանցակազմի տարրեր:

«Ականատեսն ունի վերը նշվածն ապացուցող մի շարք ձայնագրություններ եւ այլ նյութեր: Անձնական տվյալների գաղտնիության պահպանման նկատառումներով առայժմ հրապարակվում են դրանց մի մասը»,-ասված է հայտարարության մեջ:

Ավելի ուշ ՔՊ շտաբի պետ Արմեն Փամբուխչյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ «Ականատես»-ի հայտարարությունն անվանելով զրպարտություն:

Փամբուխչյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իր գործունեության ընթացքում միշտ մերժել եւ շարունակում է մերժել գումարի դիմաց քաղաքացիներին հանրահավաքներին, երթերին ներգրավելու արատավոր երեւույթը:

«Երեկ առավոտյան՝ հոդվածը լույս տեսնելուց անմիջապես հետո, կուսակցության նախընտրական շտաբը կապ է հաստատել առանց բացառության բոլոր ենթաշտաբների պետերի հետ: Կարող ենք փաստել, որ կուսակցության ո՛չ կենտրոնական շտաբը, ո՛չ ենթաշտաբները որեւէ առնչություն չունեն հոդվածում նկարագրվող պրոցեսների հետ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իր քարոզարշավն իրականացնում է բացառապես օրենքով սահմանված կարգով՝ օգտվելով միայն վճարովի գովազդային եւ այլ այնպիսի ծառայություններից, որոնք արգելված չեն օրենքով եւ չեն հակասում մեր արժեքներին: Որպես օրինակ՝ գովազդային գործակալությունների հետ սահմանված կարգով համագործակցում ենք պաստառներ փակցնելու, թռուցիկներ տարածելու, լեդ էկրանների վրա գովազդային հոլովակներ տեղադրելու եւ նման այլ հարցերով:

Իրավապահ մարմիններին կոչ ենք անում անհապաղ ստուգել հրապարակված հոդվածում առկա տեղեկատվության իսկությունը եւ դրանում քրեաիրավական գնահատականի արժանի արարքի առկայությունը:

Ասերկբայորեն պետք է պարզել այս գործողությունը կատարողի կամ այս պատմությունը բեմադրողի ինքնությունը»:

ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ՝ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայությունը օրերս հարցաքննության, ինչպես նաեւ առերեսման է հրավիրել «Լեռնային Հայաստան» առողջարանի N զորամասի գնդապետ Կորյուն Եղիազարյանին:

Հիշեցնենք, որ գնդապետ Կորյուն Եղիազարյանը առավել հայտնի է 2018թ.-ի հեղափոխության օրերին. ԱԺ պատգամավոր Առաքել Մովսիսյանի՝ Շմայսի հետ միասին զբաղված է եղել Արգավանդի «պաշտպանությամբ»: Նրանք դիմադրում էին, որ ոչ մի դեպքում իշխանությունը չփոխվի, եւ փողոցում քայլողները իշխանության չգան:

Եղիազարյանը հարցաքննության է հրավիրվել ոչ թե այդ արարքի, այլ ուրիշ պատրվակով: Նրան հարցաքննության ու առերեսման են հրավիրել Սերժ Սարգսյանի անվտանգության ղեկավար, ՊՊԾ պետ Վաչագան Ղազարյանի դեմ հարուցված քրեական գործով:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Ժողովուրդ» օրաթերթի այն արձանագրումներից հետո, որ Երեւանի նախկին քաղաքապետ, քաղաքապետի թեկնածու Հայկ Մարությանը նախընտրական ծրագիր անգամ չի ներկայացրել, նա վերջապես արթնացել ու ծրագիր է ներկայացրել: Օրեր առաջ գրել էինք, որ ավագանու ընտրություններն արդեն քանի օր է՝ մեկնարկել են, բայց «Ազգային առաջընթաց» կուսակցությունը, որի ցուցակը գլխավորում է Հայկ Մարությանը, նախընտրական ծրագիր չի ներկայացրել. նախկին քաղաքապետը միայն 2018թ.-ի նախընտրական քարոզարշավի հոլովակներով է կիսվում իր սոցիալական էջերում, բայց նոր ոչինչ չունի առաջարկելու երեւանցիներին, դրա համար էլ նախընտրական ծրագիր չունի: Բազմաթիվ քննադատություններից հետո դերասան նախկին քաղաքապետը քնից արթնացել է ու որոշել է վերջապես նախընտրական ծրագիր ներկայացնել: Հայկ Մարությանի նախընտրական ծրագիրը բաղկացած է 12 մասից. ծրագրում ներկայացվել են աղբահանության, կանաչապատման, բազմաբնակելի շենքերի կառավարման, տրանսպորտի, քաղաքային պլանավորման, սոցիալական պաշտպանության եւ այլ խնդիրներ:

ԽՆԴՐԱՀԱԲՈՒՅՑ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Հայաստանի հանրությունը խորը հիասթափություն է ապրել եւ ապրում Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գործելակերպի վերաբերյալ, կարծում եմ՝ ակնհայտ է: Նաեւ սա է պատճառը, որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության՝ 2022 թվականի աշնանը Երեւանում տեղի ունեցած գագաթնաժողովի ընթացքում Հայաստանը չվավերացրեց, չմիացավ մի շարք փաստաթղթերի, եւ քանի որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում որոշումներն ընդունվում են կոնսենսուսով, այդ դեպքում որոշում չընդունվեց»:

Այսպիսի կարծիք սեպտեմբերի 2-ին ասել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ հարցազրույց տալով իտալական La Repubblica թերթին, քննադատության ենթարկելով ՀԱՊԿ-ին:

Սակայն հետաքրքիր է, որ այսօր Փաշինյանի կառավարության գլխավոր անդամներից մեկը՝ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը, կոչ է արել սեւ ու սպիտակ գնահատականներ չտալ գործընկերների մասին: «ՄԵՆՔ չպետք է սեւ ու սպիտակ գնահատական տանք այս կամ այն գործընկերոջ գործողություններին կամ աջակցության որակին»,- հայտարարել է Հայաստանի փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը: Նրա խոսքով՝ պետք է խորը վերլուծել եւ հասկանալ, թե ինչ դերակատարների ու գործողությունների պակաս կա:

Այսինքն՝ ստացվում է՝ կառավարության երկու ներկայացուցիչները նույն հարցի վերաբերյալ տարբեր կարծիքներ ունեն:

Նշենք նաեւ, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Ռուսաստանի մասին հայտարարությունները իտալական լրատվամիջոցներին տված հարցազրույցում տոնով անընդունելի են, Մոսկվայում ծայրահեղ դժգոհ են: Այս մասին TACC-ին հայտնել է դիվանագիտական աղբյուրը:

«Մոսկվան չափազանց դժգոհ է Հայաստանի ղեկավարության վերջին հրապարակային հայտարարություններից, այդ թվում՝ իտալական La Repubblica թերթին տված հարցազրույցում Հայաստանի վարչապետի հայտարարություններից եւ օգոստոսի 31-ին ՀՀ ԱԳՆ-ի մեկնաբանությունից. դրանք իրենց տոնով եւ բովանդակությամբ անընդունելի են՝ նպատակ ունենալով սեփական սխալ հաշվարկների եւ սխալների պատասխանատվությունը Ռուսաստանի վրա դնել»,- ասել է աղբյուրը:

Ըստ դիվանագիտական աղբյուրի՝ Ռուսաստանը չի պատրաստվում հեռանալ Հարավային Կովկասի տարածաշրջանից՝ որպես Հայաստանի ամենամոտ բարեկամ եւ հարեւան, բայց Երեւանը չպետք է դառնա Արեւմուտքի գործիքը՝ Ռուսաստանի Դաշնության դուրսմղման համար:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՒՇԱՑԱԾ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հրաժարականի դիմում ներկայացրած ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը Ֆեյսբուքի իր էջում պարզաբանել է, թե ինչու ավելի վաղ հրաժարական չի տվել, ինչպես նաեւ այն, թե ով է լինելու հաջորդ նախագահը:

Նախկին նախագահը գրառման մեջ մեկ անգամ տեղեկացրել է, որ սեպտեմբերի 1-ից վայր է դրել Արցախի Հանրապետության նախագահի լիազորությունները՝ Ազգային ժողովին հղած հրաժարականի դիմումի հիման վրա՝ այդ եւ հարակից զարգացումների վերաբերյալ մի քանի հիմնական հարցի անդրադառնալով:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նախկին նախագահը նախ խոսել է այն մասին, թե ինչու ավելի վաղ հրաժարական չի տվել.

«Քանի որ գործող սահմանադրական կարգավորումները ենթադրում էին, որ իմ հրաժարականի դեպքում պետք է միաժամանակյա նախագահական ու խորհրդարանական արտահերթ ընտրություններ կազմակերպվեին, իսկ դրա իրագործման հնարավորությունը խիստ մշուշոտ էր, հատկապես՝ շրջափակման պայմաններում, ուստի ես նախաձեռնեցի, եւ Ազգային ժողովն ընդունեց Սահմանադրության փոփոխություն, որպեսզի հնարավոր լինի ռազմական դրության ժամանակ խորհրդարանի կողմից ընտրել անցումային նախագահ մինչեւ գործող հանրապետության նախագահի լիազորությունների ավարտը: Սահմանադրության 168.1-րդ հոդվածն ուժի մեջ է մտել հուլիսին, որից հետո քանիցս մտածել եմ հարմար պահի մասին, սակայն կարեւոր արտաքին քաղաքական զարգացումների վրա բացասաբար չազդելու համար որոշ ժամանակ սպասել եմ եւ որոշումս կայացրել օգոստոսի վերջին»,- գրել է Հարությունյանը:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ է տեղի ունենալու մինչեւ Հանրապետության նոր նախագահի ընտրությունը, Արայիկ Հարությունյանը նշել է, որ, Սահմանադրության կարգավորման համաձայն, Ազգային ժողովի նախագահը ժամանակավորապես իրականացնում է Հանրապետության նախագահի լիազորությունները, որը պարզապես մի քանի օրվա հարց է:

«Բացի դրանից, ինչպես հայտարարել եմ, նախքան հրաժարականս նշանակել եմ նոր պետական նախարար՝ լայն լիազորություններով, որպեսզի նաեւ այդ միջոցով հնարավոր լինի պահել պետական համակարգի կայունությունը»:

Խոսելով հանրապետության հաջորդ նախագահի ով լինելու մասին՝ Հարությունյանը գրել է, որ այդ հարցի լուծումը Սահմանադրությամբ վերապահված է բացառապես Ազգային ժողովին՝ խմբակցությունների առաջարկությունների հիման վրա: Ուստի պատգամավորներին կոչ է անում Հանրապետության նախագահի ընտրության հարցում առաջնորդվել իրենց խղճով եւ չտրվել տարաբնույթ նեղ խմբային ազդեցությունների:

«Հիշեցնեմ, որ 44-օրյա պատերազմից անմիջապես հետո ես դադարեցրել եմ իմ կուսակցական գործունեությունը եւ որեւէ առնչություն չունեմ «Ազատ հայրենիք» կուսակցության հետ: Ուստի որեւէ կերպ չեմ կարող եւ չեմ ցանկանում ներգրավվել Ազգային ժողովի «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության դիրքորոշման ձեւավորման գործում, եւ իրենք ամբողջովին ինքնուրույն կերպով կորոշեն իրենց մոտեցումները:

Ո՛չ ես, ո՛չ էլ մեկ այլ կողմնակի անձ իրավունք չունենք միջամտելու այդ գործընթացին: Հորդորում եմ բոլոր քաղաքական ու հանրային գործիչներին զսպվածություն ցուցաբերել եւ առաջնորդվել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ եւ ժողովրդավարական բարձր քաղաքական մշակույթով»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՀԱՊԱՏԻԺԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մահապատժի վերջնական վերացման մասին արձանագրությունը ստորագրել են Եվրախորհրդի բոլոր 46 անդամները, սակայն այն ուժի մեջ է մտել միայն 44-ում: Հայաստանն ու Ադրբեջանը դեռ չեն վավերացրել այն: Այս մասին սեպտեմբերի 4-ին Ազգային ժողովում պետական-իրավական հարցերի մշտական խորհրդարանական հանձնաժողովի նիստում «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի վավերացման հարցի քննարկման ժամանակ հայտարարել է հանրապետության արդարադատության փոխնախարար Կարեն Կարապետյանը: Կառավարության ներկայացուցչի խոսքով՝ այս թեման պարբերաբար բարձրացվում է ԵԽԽՎ օրակարգում: Միաժամանակ ԵԽ պաշտոնյաները պարբերաբար Հայաստանի իշխանություններին խնդրում են ուշադրություն դարձնել այս խնդրին: «Մյուս կողմից՝ Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ արձանագրությունը, ըստ որի՝ մահապատիժը սահմանափակվում է ռազմական գործողությունների ժամանակով կամ դրա անմիջական վտանգով»,- նշեց փոխնախարարը:

N13 արձանագրությունը, ինչպես նշեց պաշտոնյան, դիտվում է որպես մահապատժի բոլոր տեսակների վերացման վերջնական քայլ: Նշենք նաեւ, որ նա ասաց՝ նախագծի՝ Սահմանադրական դատարան ուղարկման մասին: Սահմանադրության հետ հակասություններ չեն գտել:

Հավելենք, որ համեմատաբար կարճ քննարկումներից հետո օրենսդրական նախաձեռնությունը մշտական խորհրդարանական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացավ:

ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեպտեմբերի 4-ից սկսում է «ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնության ներկայացրած ստորագրությունների ստուգման գործընթացը: Նախաձեռնության լիազոր ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել գործընթացին:

Հունիսի 20-ին ԿԸՀ-ն գրանցել էր 66 քաղաքացիների դիմումը՝ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագիծը (Հարցը) քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու վերաբերյալ»:

Նախաձեռնող խումբը ստորագրությունների հավաքման համար ուներ 60 օր՝ հունիսի 21-ից օգոստոսի 19-ը ներառյալ:

Քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչները օգոստոսի 31-ին ստորագրությունների լրացված ձեւաթղթերի 5 տուփ են ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ԿԱՐՄՐՈՒԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 4-ի դրությամբ Հայաստանում արձանագրվել է կարմրուկի 415 դեպք՝ 291 երեխա եւ 124 մեծահասակ: ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնից հայտնում են, որ հոսպիտալացված քաղաքացիներ չկան:

ԿԱՇԱՌՔ

ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՈՒՄ՝ ԳՈՒՄԱՐՈՎ

Հայաստանի դատախազությունը հայտնում է, որ Արարատի մարզի զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետը ստացել է խոշոր չափերով կաշառք՝ զորակոչիկին զինվորական ծառայությունից ազատելու համար:

Ա.Թ.-ն, լինելով Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետ, 2023 թվականի մարտ-ապրիլ ամիսներին պահանջել եւ ստացել է խոշոր չափերով կաշառք:

«Մասնավորապես, քրեական վարույթով պարզվել է, որ զորակոչիկ Ս.Մ.-ի հայրը՝ Հ.Մ.-ն, 2023 թվականի մարտին ծանոթացել է ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետ Ա.Թ.-ի մտերիմ Ռ.Ա.-ի հետ եւ վերջինիս խնդրել կազմակերպել որդուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու գործընթացը: Քաղաքացի Ռ.Ա.-ն իր մտերիմ, Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետ Ա.Թ.-ի հետ համաձայնության է եկել 10 հազար ԱՄՆ դոլարի դիմաց ազատել Ս.Մ.-ին պարտադիր զինվորական ծառայությունից (Ա.Թ.-ն խոստացել է 2 հազար ԱՄՆ դոլարը տրամադրել իրեն օժանդակող Ռ.Ա.-ին): Ռ.Ա.-ն 2023 թվականի մարտի 30-ին վերցրել է կաշառքի մի մասը՝ 2 հազար 500 ԱՄՆ դոլարը, որից 1000 ԱՄՆ դոլարը փոխանցել է Ա.Թ.-ին: Զորակոչիկի կողմից բժշկական հետազոտություններն անցնելուց հետո Ռ.Ա.-ն ստացել է մնացած 7 հազար 500 ԱՄՆ դոլարը եւ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետին փոխանցել ընդհանուր առմամբ 7 հազար 400 ԱՄՆ դոլար:

Մեկ այլ դրվագով՝ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետ Ա.Թ.-ն կրկին իր մտերիմ Ռ.Ա.-ի միջոցով Արարատի մարզի երկու բնակչից ստացել է 120 հազար դրամ կաշառք՝ վերջիններիս 2023 թվականի հերթական վարժական հավաքից ազատելու համար: Բացի այդ, 2023 թվականի ապրիլի 17-ին Զորակոչի բաժանմունքի ավագ մասնագետ Ա.Թ.-ն զանգահարել է Արարատի մարզի բնակիչ Հ.Մ.-ին, հայտնել, որ տարածքային ստորաբաժանման կողմից նրան վարժական հավաքին ներկայանալու վերաբերյալ ծանուցագիր է ուղարկվելու, եւ ծանուցագիրը չուղարկելու համար, որպես կաշառք, առաջարկել է Հ.Մ.-ին պատկանող ռեստորանային համալիրում Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման հինգ ծառայողների համար հյուրասիրություն կազմակերպել: Հ.Մ.-ն ընդունել է առաջարկը եւ հյուրասիրություն կազմակերպել հինգ անձի համար՝ յուրաքանչյուրի համար վճարելով 15 հազար դրամ: Հաշվի առնելով, որ Ա.Թ.-ի գործողություններում առկա են հանցագործության հատկանիշներ՝ հսկող դատախազի նախաձեռնությամբ՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ին Ա.Թ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (խոշոր չափերով կաշառք ստանալը), 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալը) (2 դրվագ) եւ 435-րդ հոդվածի 1-ին մասով (կաշառք ստանալը՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որեւէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, կաշառք տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար)»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 2-ին՝ ժամը 12.42-ին, ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձ 31-ամյա Գ.Գ-ն ինքնասպանություն է գործել՝ կախվելով ճաղավանդակից: Գ.Գ-ն, իր դիմումի համաձայն, մեկուսի է պահվել կարանտինային խցում:

Նշենք, որ կալանավորված անձն առողջական խնդիրների պատճառով ստացիոնար բուժման մեջ է գտնվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, որտեղից, իր դիմումի համաձայն, դուրս է գրվել 2023 թվականի սեպտեմբերի 1-ին եւ տեղափոխվել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

Նախնական տվյալներով՝ կալանավորված անձը 2023թ. սեպտեմբերի 2-ին՝ ժամը 12-ի սահմաններում, ցանկություն է հայտնել օգտվել իրեն հասանելի հեռախոսազանգից: Ժամը 12.12-ին վերջինս դուրս է բերվել խցից, կատարել է հեռախոսազանգ, ժամը 12.15-ին վերադարձել է խուց, որից հետո նրան հայտնաբերել են կախված վիճակում:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր:

ԹՄՐԱՆՅՈՒԹՆ ՈՒ ՓՈԽՏՆՕՐԵՆԸ

Տարոնի քրեական հետախույզները տեղեկությունն իրացրին սեպտեմբերի 3-ին: Երեկոյան ժամը 7.30-ին ձեռնարկած միջոցառումների արդյունքում Վանաձորի Տիգրան Մեծի փողոցում ձերբակալվեց եւ ոստիկանության Տարոնի բաժին բերվեց 43-ամյա մի տղամարդ, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց կաթուցիչ՝դեղնականաչավուն զանգվածով:

Դպրոցի փոխտնօրեն տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Լոռու մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

ԵՐՔԱՆԿՈՒԹՅԱՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել մայրաքաղաքի Թամանցիների փողոցում հյուրանոցային համալիրի կրակոցներից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ հնչած կրակոցները ուրախության կրակոցներ են եղել:

Բանն այն է, որ ռեստորանի սեփականատիրոջ հարազատներից մեկը երկար տարիներ երեխա չի ունեցել, որից հետո ընտանիքում երեխա է ծնվել, եւ ոգեւորված ընտանիքի անդամները զենքով մի քանի անգամ օդ են կրակել ու հայտնվել իրավապահների տեսադաշտում:

Սեպտեմբերի 3-ին՝գիշերվա ժամը 3.30-ին, «1-02» զանգած անհայտ քաղաքացին հայտնել էր, որ մայրաքաղաքի Թամանցիների փողոցում՝ հյուրանոցային համալիրից լսվում են կրակոցի ձայներ: Այս մասին հայտնում էին ոստիկանությունից: Հաղորդումը փոխանցվել էր ոստիկանության Շենգավիթի բաժին, որտեղից էլ օպերատիվ խումբը մեկնել էր դեպքի վայր:

Մեկնել էին նաեւ պարեկներ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել էին «ԱԿՍ» տիպի ինքնաձիգ, 4 փամփուշտ եւ 12 պարկուճ: Շենգավիթի քրեական հետախույզների եւ մայրաքաղաքի պարեկների համատեղ ջանքերով սեպտեմբերի 3-ին՝ ժամը 16:10-ին, խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել եւ բաժին էին տեղափոխվել երեք տղամարդ: Նրանցից մեկը՝ 29-ամյա երիտասարդը, հայտնել է, որ ինքնաձիգից ինքն է կրակել օդ: Երեքն էլ ներկայացվել են քննչական բաժին: Բացի կրակողից, մյուս երկուսը բաց էին թողնվել:

ՊԱՐՔ Է

Ո՞Վ Է ՔՆՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախաքննության ավարտ է հայտարարվել Ազատ գյուղի զինվորների կացարանում հունվարի 19-ին բռնկված ողբերգական հրդեհի գործով. այն խլեց 15 զինվորի կյանք: Տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատել էր նաեւ գործով կալանավորված սպա Եղիշե Հակոբյանի պաշտպան Հովսեփ Սարգսյանը:

Ըստ նախաքննական մարմնի՝սպան բենզինը լցրել էր վառարանը, կրակը անսպասելի թեժացել էր, ինչի հետեւանքով տեղի ունեցավ ողբերգական դեպքը: Հիշեցնենք, որ դեպքը եղել էր այս տարվա հունվարի 19-ին Ազատ գյուղի զինվորական կացարանում, ինչի հետեւանքով մահացան 15 զինծառայողներ. սույն գործով մեղադրյալի աթոռին են 4 անձ:

Եվ, ահա, Եղիշե Վահագնի Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով Հայաստանի Հանրապետությա ՊՆ Ն զորամասի ինժեներական ծառայության սպայի պաշտոնը, խախտել է ավտոբենզինի հետ վարվելու կանոնը, որը օգտագործել է Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված Հայաստանի Հանրապետության ՊՆ Ն զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում շահագործվող վառարանը վառելու նպատակով, որի հետեւանքով կացարանում հրդեհ է բռնկվել:

Եղիշե Վահագնի Հակոբյանի կողմից կացարանում գտնվող զինծառայողների պաշտպանությունը չապահովելու հետեւանքով նույն վաշտի պարտադիր ժամկետային զինծառայողներ, կրտսեր սերժանտներ Արամ Մանուկյանը, Վոլոդյա Ներսիսյանը, Պավլիկ Աբազյանը, Միշա Դումիկյանը, շարքայիններ՝ Գոռ Մարտիրոսյանը, Ռոստոմ Ասրյանը, Մուշեղ Համբարձյանը, Տարոն Ղարիբյանը, Դավիթ Սարգսյանը, Հրաչյա Գրիգորյանը, Նարեկ Ավագյանը, Գագիկ Բարսեղյանը, Հայկ Կիրակոսյանը, Սերգեյ Կեւորկովը, Համլետ Դավթյանը մահացել են, իսկ պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Գարուշ Սարգսյանը, Լեւոն Խառատյանը, Ժիրայր Սահակյանը, Ռադիկ Մաթեւոսյանը եւ Եղիշե Հակոբյանը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Գործը քնելու է դատավոր Վարդան Հարությունյանը

ՀՈՎԻՎԸ ՄԱՀԱՑԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 3-ին Գետաշենի հովվին գտել են սարի իր փոքրիկ տնակում մահացած:

Պարզվել է, որ մահացածը 40-ամյա Անդրանիկ Սարգսյանն է, որը զբաղվում է անասնապահությամբ:

Իսկ թե ինչն է եղել մահվան պատճառը, դեռեւս քննվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝սեպտեմբերի 1-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 127 դեպք, որոնցից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

«ՕԴՈՒՄ ԿԱԽՎԱԾ» ԶԻՆՂԵԿՆԵՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցնելով՝ սեպտեմբերի 1-ից Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների այն զինղեկները, որոնք ունեն միջնակարգ կրթություն եւ ուսուցիչների կամավոր ատեստավորմանը չեն մասնակցել, դրանում դրական արդյունքներ չեն ունեցել, զրկվելու են դպրոցներում դասավանդելու իրավունքից, Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում միջնակարգ կրթությամբ քանի զինղեկ է աշխատում, նրանցից քանիսն է հայտ ներկայացրել մասնակցելու կամավոր ատեստավորմանը, քանիսն է ազատվել աշխատանքից: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների բոլոր ուսուցիչները, այդ թվում՝ զինղեկները, ովքեր չունեն բարձրագույն կրթություն եւ չեն հայտագրվել կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար, ազատվել են աշխատանքից:

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում միջնակարգ կրթությամբ զինղեկ չի աշխատում, կամավոր ատեստավորման համար հայտ ներկայացրել է 9 զինղեկ, 4 զինղեկ ազատվել է աշխատանքից»:

Քանի որ ատեստավորման հարցաշարերը չեն հրապարակվել, այլ միայն քննական թեստերի ուղեցույցները, քննական թեստերն էլ շատ խրթին են, դրանց պատասխանելու համար տրվող ժամանակը՝ շատ սուղ, ուստի դժվար չէ ենթադրել, որ կամավոր ատեստավորման համար հայտ ներկայացրած 9 զինղեկի մեծամասնությունը ատեստավորումից դրական արդյունք չի ունենալու եւ ազատվելու է աշխատանքից: Սահմանամերձ Տավուշի հանրակրթական որոշակի թվով դպրոցներում բարձր դասարանցիները զինղեկ չլինելու պատճառով Ռազմագիտություն, Նախնական զինվորական պատրաստություն չեն սովորելու:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե օգոստոսի 25-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի աշխատակիցները պետական բյուջեից ընդհանուր ինչքան պարգեւավճար են ստացել, նույն օրվա դրությամբ մարզի սոցիալապես անապահով, կարիքավոր բնակիչները պետական բյուջեից ինչքան դրամական օգնություն են ստացել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «2023թ. օգոստոսի 25-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են պարգեւատրումներ՝ 50395.0 հազար դրամ: Տավուշի մարզի սոցիալապես կարիքավոր բնակչները 2023թ. օգոստոսի 25-ի դրությամբ պետական բյուջեից Տավուշի մարզպետի աշխատակազմի միջոցով ստացել են 48725.0հազ.դրամ»:

122 հազար բնակիչ ունեցող Տավուշի մարզի՝ սոցիալապես անապահով, հրատապ բուժման եւ այլ կարիքներ ունեցող բնակիչները պետական բյուջեից մոտ 2 միլիոն դրամով ավելի քիչ օգնություն են ստացել, քան համեմատաբար բարձր վարձատրվող 72 աշխատակից ունեցող Տավուշի մարզպետարանի աշխատողները՝ պետբյուջեից պարգեւավճար: Կուշտը սովածին մանր է բրդում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՖՈՐՈՒՄ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Երեւանում սեպտեմբերի 6-8-ը կանցկացվի Համաշխարհային զբոսաշրջային ներդրումային ֆորումը, որը կազմակերպել է ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեն ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությամբ: ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ Սիսիան Պողոսեանի խոսքով՝ ֆորումի հիմնական նպատակն է ներկայացնել համավարակից հետո համաշխարհային մակարդակով զբոսաշրջության ոլորտում ներդրումային միտումները, մարտահրավերները:

«Իհարկե, գլոբալ միտումներն են ներկայացվելու, բայց առանձին անդրադարձ է կատարվելու նաեւ Հայաստանին: Սա շատ լավ առիթ է Հայաստանի ներդրումային հնարավորությունները, ծրագրերը ներկայացնելու համար: Մենք շեշտը դնելու ենք մի քանի ուղղությունների վրա՝ մշակույթ, գաստրո, գինի, արկածային տուրիզմ»,-ասաց Սիսիան Պողոսեանը: Նա տեղեկացրեց, որ ֆորումին ներկայացվելու է նաեւ Համաշխարհային բանկի հետ մեկնարկող խոշոր ծրագիրը, որը նույնպես կարող է հետաքրքրել ներդրողներին: Մասնավորապես, նախատեսվում է Հայաստանի տարածքում առանձնացնել կլաստերներ, գոտիներ, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է լինելու զբոսաշրջային որեւէ ուղղության, օրինակ՝ Արենին՝ գինու գոտի, Գյումրին՝ մշակութային գոտի եւ այլն: Առաջիկայում սպասվում է միջազգային մասնագետների այց Հայաստան, որոնք կկատարեն առանձնացված տարածքների համապատասխան ուսումնասիրություն, վերլուծություն եւ կներկայացնեն զարգացման տեսլական:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ համաշխարհային զբոսաշրջային ներդրումային ֆորումին նախատեսվում է ՄԱԿ ԶՀԿ անդամ պետությունների, այլ օտարերկրյա պետությունների զբոսաշրջության ոլորտի պատասխանատուների, օտարերկրյա եւ տեղական ներդրողների, միջազգային կազմակերպությունների, պետական, մասնավոր հատվածի մասնակցություն: Զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ Սոնա Հովհաննիսյանը նշեց, որ ակնկալվում է 150 հոգու մասնակցություն տարբեր երկրներից՝ ԱՄՆ-ից, Էմիրություններից, եվրոպական երկրներից, Սենեգալից, Բահրեյնից, Ալժիրից, Մոլդովայից, Իրանից: Ակտիվ մասնակցություն են ապահովելու նաեւ Հայաստանում գործող տարբեր երկրների դեսպանությունները:

«Խնդիր է դրված ցույց տալ զբոսաշրջային ոլորտի հիմնական ներդրումային միտումները: Կարեւոր է հասկանալ, թե ինչպես է փոխվել ներդրումային միջավայրը: Գիտենք, որ քովիդը մեծ ազդեցություն է ունեցել զբոսաշրջության ոլորտի վրա, որն ամբողջ աշխարհում բավական տուժել է: Այս համատեքստում մեր խնդիրն է Հայաստանը հնարավորինս ներկայացնել իր բոլոր կողմերով»,-ասաց Սոնա Հովհաննիսյանը:

Ֆորումի շրջանակներում նախատեսված են նաեւ սոցիալ-մշակութային միջոցառումներ Հայաստանի զբոսաշրջության ներուժը եւ գրավչությունները ներկայացնելու նպատակով: Զբոսաշրջության կոմիտեի հանրային կապերի ղեկավար Աննա Մարգարյանը տեղեկացրեց, որ հյուրերի համար Հայաստանը բացահայտելուն ուղղված զբոսաշրջային ծրագիր է նախատեսված: Նրանց համար հատուկ տուրեր են կազմակերպվելու: Առանձին տուրերով ներկայացվելու է մշակույթը, գաստրոտուրիզմը եւ գինու զբոսաշրջությունը:

«Մենք նաեւ հյուրընկալելու ենք միջազգային մեդիա ներկայացուցիչների: Ինչպես գիտեք, այս ուղղությամբ եւս Զբոսաշրջության կոմիտեն ակտիվ աշխատանք է տանում: Այս տարվա ընթացքում արդեն առիթ ունեցել ենք տարբեր երկրների մեդիա ներկայացուցիչների, բլոգերների ընդունել Հայաստանում, ներկայացնել մեր երկրի զբոսաշրջային հնարավորությունները: Ֆորումը եւս առիթ է մեդիա ոլորտի ներկայացուցիչների հետ աշխատելու: Այս անգամ մեր երկիրը կներկայացվի ոչ միայն արկածային, մշակութային, գաստրոտուրիզմի, այլեւ ներդրումների համար բարենպաստ միջավայր ունեցող երկիր»,-հավելեց Աննա Մարգարյանը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՑԵՐԵՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Հանրակրթական դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագրի շրջանակում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով, հաստատվել է վրացերենի ուսուցման առարկայական ծրագրերը՝ 8-րդ եւ 11-րդ դասարանների համար:

Հիշեցնենք, որ, ԿԳՄՍ նախարարի հրամաններով, հաստատվել էին նաեւ պարսկերենի, վրացերենի, թուրքերենի եւ ադրբեջաներենի առարկայական ծրագրերը, այս ուսումնական տարում գործընթացը շարունակելու համար անհրաժեշտություն կար հաստատելու միայն վրացերենի 8-րդ եւ 11-րդ դասարանների ծրագրերը:

Նշենք, որ տարածաշրջանային լեզուների առարկայական ծրագրերը մշակելու համար ԿԳՄՍ նախարարությունը համագործակցել է համապատասխան մասնագետների եւ Երեւանի պետական համալսարանի հետ: Մշակված ծրագրերը սահմանված կարգով երաշխավորվել են դպրոցներում գործածության համար:

Տարածաշրջանային լեզուների ուսուցումն իրականացվում է 2022-2023 ուսումնական տարվանից՝ որպես երրորդ օտար լեզու կամ առարկայական խմբակ:

Հիշեցնենք՝ մասնագիտական քննարկումների արդյունքում որոշում է կայացվել ադրբեջաներենի եւ թուրքերենի ուսուցումը կազմակերպել բացառապես 10-12-րդ դասարանների սովորողների համար, իսկ վրացերենի եւ պարսկերենի ուսուցումը՝ միջին դպրոցի դասարաններից սկսած:

2022-2023 ուսումնական տարում տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրը իրականացվել է ՀՀ 33 հանրակրթական ուսումնական հաստատություններում, որոնցից 13-ում՝ պարսկերեն, 3-ում՝ վրացերեն, 13-ում՝ թուրքերեն, 4-ում՝ ադրբեջաներեն:

Վերոնշյալ հաստատությունների մի մասում տարածաշրջանային լեզուների ուսուցումն իրականացվում է խմբակի ձեւաչափով, որոշներում՝ 3-րդ օտար լեզվի:

Կան հաստատություններ, որոնցում ուսուցումն իրականացվում է եւ՛ 3-րդ օտար լեզվի, եւ՛ խմբակի ձեւաչափով: Խմբակի եւ 3-րդ օտար լեզվի ուսուցման դեպքում հաստատություն նոր մուտք գործող մասնագետը պետք է համապատասխանի «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին:

Համապատասխան մասնագետ ունենալու դեպքում ուսումնական հաստատություններն ազատ են տարածաշրջանային լեզուների ուսուցումը ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված ծրագրերով կազմակերպելու հարցում, որի մեկնարկի մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ԿԳՄՍ նախարարությանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 38 ճՏՊ. 3 մարդ զոհվել է, 48-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՑԸ՝ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 5-ից Ստեփանակերտ քաղաքում հացի վաճառքը կիրականացվի կտրոններով, իսկ կտրոնների տրամադրման գործընթացը կմեկնարկի սեպտեմբերի 4-ից:

Կտրոն ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթի բնօրինակով եւ հանրային ծառայությունների համարանիշով ներկայանալ կտրոնների տրամադրման կետեր, որոնք կգործեն ժամը 10:00-18:30-ը՝ հաշվի առնելով կտրոնների տրամադրման յուրաքանչյուր կետի հասցեում լույսերի հովհարային անջատման գրաֆիկը:

ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ հերթերից խուսափելու համար նախընտրելի է, որ յուրաքանչյուր ընտանիքից մեկ անձ ներկայացնի ընտանիքի բոլոր անդամների անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները (անչափահաս երեխայի դեպքում՝ ծննդյան վկայական կամ անձնագիր) եւ հանրային ծառայությունների համարանիշները:

Քանի որ կտրոնները համարակալված են, ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարության կողմից յուրաքանչյուր օր կիրականացվի իրազեկում, թե տվյալ եւ հաջորդ օրը որ համարի կտրոնով է իրականացվելու հացի վաճառքը:

Հացի վաճառքի կետերի վերաբերյալ տեղեկատվությունը կհաղորդվի հավելյալ: Մեկ անձի հաշվով կվաճառվի կես հաց (մոտավոր՝ 200 գրամ):

ԿԲԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին ԱՀ ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ սույն թվականի սեպտեմբերի 4-ին եւ 5-ին Ստեփանակերտի հ. 2, 5, 6, 7, 9, 10 եւ 12 հիմնական դպրոցներում ուսումնական գործընթաց չի իրականացվելու՝ կապված հացի վաճառքի համար տրամադրվող կտրոնների ձեռք բերման գործընթացի հետ: Մյուս դպրոցներում դասերը կընթանան սովորական հունով:

Օրեր առաջ՝ Հակարիի կամրջից ուսանողների առեւանգումից հետո, ադրբեջանական կողմն արգելել է նաեւ ուսանողների ելքն Արցախից:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ Արցախի ուսանողները, որոնք ընդունվել էին հայաստանյան բուհեր, դիմել են ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, որպեսզի դասերին կարողանան օնլայն մասնակցել:

Նախարարությունը թույլատրել է դասերին օնլայն մասնակցությունը միայն Արցախի ուսանողներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրանտ Վահանի Աբրահամյանը սովորել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության տեսության ֆակուլտետում առկա բակալավրիատ ծրագրով 2014-2018 ուս. տարիներին: Կորցրել է դիպլոմը, խնդրում է վերականգնել այն:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

Գ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	50, 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	5,000,000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 5%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա
Թողարկման ամսաթիվ	05.09.2023
Տեղաբաշխման ժամկետ	05.09.2023թ. – 06.10.2023թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ ֆոնդային բորսայի առեւտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի եւ բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար, «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ–ում եւ «Յունիբանկ» ԲԲԸ–ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	05.09.2026թ.

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ պարտատոմսերի մարումը կիրականացվի հետեւյալ ժամանակացույցով.
Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 05.12.2023թ.
Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 05.03.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 05.06.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 05.09.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 05.12.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 05.03.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 05.06.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 05.09.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների իներորդ վճարում՝ 05.12.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում՝ 05.03.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում՝ 05.06.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 05.09.2026թ.
Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաեւ մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի քանակը	100, 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	1,000, 000, 000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 11%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա
Թողարկման ամսաթիվ	05.09.2023
Տեղաբաշխման ժամկետ	05.09.2023թ. – 06.10.2023թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ ֆոնդային բորսայի առեւտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի եւ բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար, «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում եւ «Յունիբանկ» ԲԲԸ –ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետեւաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	05.09.2026թ.

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ պարտատոմսերի մարումը կիրականացվի հետեւյալ ժամանակացույցով.
Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 05.12.2023թ.
Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 05.03.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 05.06.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 05.09.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 05.12.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 05.03.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 05.06.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 05.09.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների իներորդ վճարում՝ 05.12.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում՝ 05.03.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում՝ 05.06.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 05.09.2026թ.
Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաեւ մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:Յունիբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԱՆՎՃԱՐ ԴԵՂԵՐ՝ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻՆ

Կառավարության որոշմամբ՝ 2024 թվականից Հայաստանում էքստրեմալ ցածր քաշով անհաս նորածինների պարենտերալ սնուցման համար անհրաժեշտ դեղերը պետությունը կապահովի անվճար: Այս մասին հայտնում է ՀՀ առողջապահության նախարարությունը:

Հայաստանում տարեկան միջինում ծնվում է ցածր քաշով 3 հազար երեխա, որոնցից, 2021թ. տվյալներով, 121-ը՝ էքստրեմալ ցածր քաշով (500-1000գ): Անհրաժեշտ դեղեր չստացած նորածինների մոտ առաջանում է ֆիզիկական, մտավոր եւ ճանաչողական զարգացման խանգարումներ, ինչպես նաեւ կրկնապատկվում են բուժման ծախսերը՝ մեծացնելով պետության կողմից հիվանդանոցին տրամադրվող միջոցներն ու ֆինանսական ծանրաբեռնվածությունը: 100% դեղապահովմամբ ակնկալում ենք նորածնային հաշմանդամության նվազում, ապրելիության աճ, մանկական մահացության նվազում: Նշենք, որ, ըստ այդ որոշման, 2024 թվականից անվճար կտրամադրվեն 6 հիվանդության բուժման համար անհրաժեշտ դեղերը: Այդ հիվանդություններն են՝ պատանեկան իդիոպաթիկ արթրիտ, առաջնային իմունոդեֆիցիտ, կավասակի հիվանդություն, նյարդաբանական խնդիրներով պայմանավորված հիվանդություն - սուր պոլիռադիկուլիտ, անհաս նորածինների դեղերի կարիք ունեցող պացիենտներ, ցրված սկլերոզ: Արդյունքում շուրջ 486 շահառու, այդ թվում՝ մեծամասնությունը երեխաներ, անվճար կապահովվեն նախկինում պետության կողմից երբեւէ չտրամադրած դեղերով, կկանխարգելվի հիվանդության զարգացումը, կնվազեն հաշմանդամության եւ մահացության ցուցանիշները:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Օկ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝
- ք. Երեւան, Կենտրոն, Վարդանանց փողոց, 11 շենք, 25 հասցեում գտնվող 70,04 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 68700000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:
Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 22.09.2023թ.-ին, 25.09.2023թ.-ին եւ 26.09.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29?12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:
Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:
Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ գրավառուի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար գրավառուն որեւէ պատասխանատվություն չի կրում:
Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐ՝ 19-ՐԴ ԴԱՐԻՑ

19-րդ դարի տասնյակ անզուգական հայկական գորգերը՝ մեկ տեղում: Հայաստանի պատմության թանգարանում բացվեց «Ձայներ հավաքական անցյալից» 19-րդ դարի հայկական գորգարվեստը, ճմուռներ Ջեյմս Թուֆենկյան հավաքածուից» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ցուցադրությունը բացվել է Հայաստանի պատմության թանգարանում՝ թանգարանի եւ «Թուֆենկյան գորգեր» ընկերության համագործակցությամբ:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը, շնորհավորելով բոլորին յուրահատուկ ցուցադրության բացման կապակցությամբ, ընդգծեց, որ ցուցադրվող 19-րդ դարի տասնյակ անզուգական հայկական գորգերը, որոնք Ջեյմս Թուֆենկյանը հավաքել է տարիներ շարունակ, արտացոլում են հայկական գորգագործական լավագույն ավանդույթների բազմազանությունը:

«Այս ցուցադրությունը մշակութային ժառանգության պահպանման, ներկայացման եւ գաղափարի շուրջ համախմբման խորհուրդ է իր մեջ պարունակում: Մայր հայրենիքում՝ մեր հանրապետության սրտում, առաջին անգամ կներկայացվի Ջեյմս Թուֆենկյանի՝ երկար տարիների աշխատանքի արդյունքը:

Արցախի, Սյունիքի, Լոռվա, Արեւմտյան Հայաստանի եւ հայկական տարբեր շրջանների տիպաբանությամբ ընտրված շուրջ 30 գորգերը, մի մասը՝ նաեւ արձանագիր, հատուկ փոխադրվել են ԱՄՆ-ից այս ցուցադրության համար:

Թանգարանի շուրջ 400 քմ ցուցադրական տարածքում վերանորոգման աշխատանքների իրականացմամբ, նորարարական հայեցակարգերով եւ համադրություններով յուրահատուկ այս ցուցադրությունը շուրջ մեկ տարի բաց կլինի եւ կներկայացվի Հայաստանի պատմության թանգարանի այցելուներին»,- ասաց թանգարանի տնօրենը:

Դավիթ Պողոսյանը շնորհակալություն հայտնեց Ջեյմս Թուֆենկյանին հայկական գորգերի հրաշալի հավաքածուն կազմելու եւ Հայաստանում դրա հետ հաղորդակցման հնարավորությունը ապահովելու համար:

Հավաքածուի հեղինակ Ջեյմս Թուֆենկյանը նշեց, որ, ցավոք, ցեղասպանությունից հետո թուրքերն ու ադրբեջանցիները շարունակում են ջնջել հայկական հետքերը: Ըստ նրա՝ այս դեպքում էլ արել են ամեն ինչ, որպեսզի ամբողջ աշխարհում խոսվի, որ գորգերը արտադրվել են Թուրքիայում, Ադրբեջանում, Անատոլիայում, բայց ոչ երբեք՝ Հայաստանում:

«Ցեղասպանությունից հետո թուրքերի համար շատ անհարմար էր, որ տարբեր տեղերում բացահայտվում էր հայկական ժառանգությունը. գործվել են հայերի կողմից: Եվ այդ պատճառով նրանք սկսեցին ոչնչացնել նաեւ այդ ամենը՝ նույնիսկ գիտական աշխարհից ունենալով իրենց կողմից գիտնականներ, որոնք համաձայնել են վերացնել հայկական ժառանգությունը: Եվ այս ամենին հակադարձելու առաջին քայլը եղավ հայկական գորգերի այս ցուցադրության իրականացումը: Ես սկսել եմ այդ գործընթացը, բայց դա ավարտված չէ, եւ հաջորդ քայլը պետք է լինի ուսումնասիրությունը. հայկական գորգագործության տակ պետք է դնել գիտական հենք, որովհետեւ ադրբեջանցիները ամեն տեղ խոսում են եւ փորձում են ապացուցել, որ գորգագործությունը սկսվել է Կենտրոնական Ասիայում սելջուկների կողմից, բայց կան վկայություններ, որ հայերը գործել են գորգեր դրանից դեռեւս 1000 տարի առաջ: Եվ սա առաջին քայլերից է դա աշխարհին ապացուցելու համար»,-ասաց Թուֆենկյանը:

Հիշեցնենք, որ Հայաստանի պատմության թանգարանում հայկական գորգերի յուրահատուկ ցուցադրությունը այցելուները վայելելու հնարավորություն կունենան մեկ տարի:

ՄԵԿՆԱՐԿԵՑ

ՇԱԽՄԱՏԻ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

Երեւանում «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնում (ՄՄԳԿ) մեկնարկել են Մոսկվայի 876-ամյակին նվիրված միջոցառումները, որի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ կազմակերպվող շախմատի 4-րդ ամենամյա մրցաշարը եւ Մոսկվայի պատմությանը նվիրված ցուցահանդեսի բացումը:

«Դոմ Մոսկվի» կենտրոնից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ 150 շախմատիստներ մրցել են 13 տուրերում՝ շրջանաձեւ մրցակարգով: Եզրափակչում էին 6 մարզիկներ, որոնք մրցեցին 8 միջազգային գրոսմայստերների հետ: Մասնակիցների թվում էր շախմատիստ, գրոսմայստեր (2017), մինչեւ 16 տարեկան պատանիների աշխարհի չեմպիոն (2016) Հայկ Մարտիրոսյանը, որը վերջերս Ալմաթիում կայացած կայծակնային շախմատի աշխարհի առաջնությունում գրավեց երրորդ տեղը եւ երկրորդ տեղը՝ Timisoara Grand Prix Rapid մրցաշարում:

«Հաճելի է մասնակցել նման մրցաշարերի: Ի վերջո, սա եւս մեկ հնարավորություն է խաղալու եւ մրցելու ընկերների հետ» ,- նշեց Հայկ Մարտիրոսյանը:

«Տարեցտարի մրցաշարի անցկացման մասշտաբները մեծանում են: Արդեն 4-րդ տարին է՝ սերտ գործակցում ենք Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի հետ: Եզրափակիչ անցած մասնակիցները խաղում էին Հայաստանի ուժեղագույն շախմատիստների հետ: Ուրախ եմ, որ հնարավորություն կա անցկացնելու նման միջոցառումներ, որոնց միջոցով մեծանում է հետաքրքրությունը շախմատի նկատմամբ»,- նշեց Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Սմբատ Լպուտյանը:

Մրցաշարի կիսաեզրափակչում իր ուժերն է փորձել նաեւ ՀՀ-ում Բելառուսի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկը:

«Արդեն 50 տարի շախմատ եմ խաղում, բայց ոչ այնքան պրոֆեսիոնալ, որքան այստեղ ներկա շախմատիստները: Շախմատի հանդեպ իմ սերը դեռ մանկուց է: Հայաստանը եզակի երկիր է, որտեղ ծնվում են հրաշալի շախմատիստներ», - նշեց Ալեքսանդր Կոնյուկը:

Նշենք, որ համառ պայքարում հաղթեցին Էմին Օհանյանը (1-ին տեղ), Տիգրան Պետրոսյանը (2-րդ տեղ) եւ Հայկ Մարտիրոսյանը (3-րդ տեղ): Մասնակիցները պարգեւատրվել են պատվոգրերով, գավաթներով եւ մեդալներով:

«Մեծ պատիվ է, որ նման պրոֆեսիոնալները եւ ճանաչված վարպետները մասնակցում են մեր մրցաշարին: Փորձում ենք անել հնարավորը, որպեսզի մրցաշարի կազմակերպումը լինի բարձր մակարդակով: Հուսով ենք, որ Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ գործակցությունը կշարունակի զարգանալ, եւ տարեցտարի մեր մրցաշարի մասնակիցների թիվը կավելանա»,- նշեց Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանը:

Հավելենք, որ մրցաշարի բոլոր մասնակիցները ծանոթացան կենտրոնում բացված ցուցահանդեսին, որը ներկայացնում է Մոսկվայի տեսարժան վայրերը: Ռուսական աշխարհագրական ընկերության հետ բացված ցուցահանդեսը ներկայացնում է քաղաքի ճարտարապետությունը, փողոցները, բնակիչների սովորություններն ու ավանդույթները, տրանսպորտային ցանցերը:

«Այսօր Մոսկվան աշխարհի ամենաարագ զարգացող մեգապոլիսներից է: Այն իրավամբ համարվում է ամենագեղեցիկ եւ հարմարավետ քաղաքներից մեկը, որն իր մոտ է տանում շատ տաղանդավոր մարդկանց: Նրանց թվում քիչ չեն հայերը, որոնք Մոսկվայի պատմության ընթացքում իրենց ներդրումն են ունեցել նրա բարգավաճման գործում: Իզուր չէ, որ մինչեւ օրս մայրաքաղաքում կարելի է տեսնել բազմաթիվ պատմական շենքեր, որոնք կառուցվել են հայերի կողմից», - ասաց Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանը:

«Իր տեսակի մեջ եզակի ցուցահանդես է. այստեղ կարելի է տեսնել, թե ինչպես է փոխվել Մոսկվան, ծանոթանալ արխիվային նյութերի: Կարծում եմ՝ յուրաքանչյուրն իր համար նոր, հետաքրքիր փաստեր կբացահայտի Մոսկվայի մասին»,- ասաց ՀՀ-ում ՌԴ դեսպանի ատաշե Դենիս Նազարովը:

Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնը Մոսկվայի օրվան նվիրված տոնական միջոցառումներն անցկացնում է Մոսկվայի կառավարության, Մոսկվայի արտաքին տնտեսական եւ միջազգային կապերի դեպարտամենտի հովանու ներքո եւ ՀՀ-ում ՌԴ դեսպանության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի ազգային հավաքականի եւ ռուսական «Կրասնոդար»-ի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանն անդրադարձել է «Եվրո-2024»-ի որակավորման փուլի շրջանակներում Հայաստանի հավաքականի առաջիկա խաղերին Թուրքիայի եւ Խորվաթիայի հավաքականի դեմ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Սպերցյանը Championat-ին տված հարցազրույցում ընդգծել է, որ Հայաստանի հավաքականին առաջիկայում երկու շատ բարդ խաղ է սպասվում: «Հավանաբար, դրանք ամենակարեւոր խաղերն են, որովհետեւ մենք մրցաշարային աղյուսակում երկրորդն ենք: Մենք երեք միավորով ենք զիջում Թուրքիային: Մեզ համար այս խաղը շատ սկզբունքային է եւ շատ մեծ նշանակություն ունի»,- ասել է Սպերցյանը:

«Եվրո-2024»-ի որակավորման փուլի շրջանակներում Հայաստանի հավաքականը սեպտեմբերի 8-ին մրցակցի հարկի տակ կխաղա Թուրքիայի, իսկ սեպտեմբերի 11-ին սեփական հարկի տակ կմրցի Խորվաթիայի ընտրանում հետ: Հայաստանի հավաքականը երեք խաղերից հետո վաստակել է 6 միավոր եւ զբաղեցնում է աղյուսակի երկրորդ հորիզոնականը՝ 3 միավորով զիջելով Թուրքիային, որը 4 խաղ է անցկացրել: Խորվաթիայի հավաքականը երկու խաղերում վաստակել է 4 միավոր եւ մրցաշարային աղյուսակում երրորդն է:

ԿԼՈՊԸ՝ ՍԱԼԱՀԻ ՄԱՍԻՆ

Անգլիական «Լիվերպուլի» եգիպտացի հարձակվող Մոհամեդ Սալահն այս տրանսֆերային պատուհանի ընթացքում չի տեղափոխվի Սաուդյան Արաբիա:

«Երբեք կասկածի տակ չեմ դրել Սալահի նվիրվածությունն ակումբին: Չեք պատկերացնի, թե ինչ աղմուկ էր մեր շուրջն այս օրերի ընթացքում, բայց մենք շատ հանգիստ ընդունեցինք իրավիճակը: Սալահը մեր ֆուտբոլիստն է եւ ցանկանում է խաղալ այստեղ»,- Կլոպի խոսքը մեջբերում է BBC-ն:

Ավելի վաղ հայտնի էր դարձել՝ Սաուդյան Արաբիայի չեմպիոն «Ալ Իթիհադը» պատրաստ է 233 միլիոն եվրո առաջարկել անգլիական «Լիվերպուլին» Մոհամեդ Սալահի տրանսֆերի համար:

«Ալ Իթիհադը» 31-ամյա ֆուտբոլիստին առաջարկել էր տարեկան 80 միլիոն եվրո աշխատավարձով երեք տարվա պայմանագիր:

Մոհամեդ Սալահը 2017 թվականից է հանդես գալիս գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմում, որի հետ նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս:

● *Սեպտեմբերի 9-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կապույտ մորուքի յոթ կանայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում ասպիրանտուրայի ընդունելությունը:

Տիգրան Սահակյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները: Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝կցելով բակալավրի եւ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին), օտար լեզու եւ ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ), ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝կցելով նաեւ ինքնակենսագրություն եւ երեք լուսանկար (3 x 4 չափսի) եւ քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ ձեւերով կարող է ղեկավարման գույքը տրամադրվել վարձակալության:

Լիդա Անանյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի   N 914-Ն որոշման համաձայն՝պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը եւ օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքը (բացառությամբ պաշտպանական, սահմանային, քաղաքացիական պաշտպանության ռազմարդյունաբերության, ինչպես նաեւ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի տիրապետմանը եւ օգտագործմանը հանձնված պետական գույքը, որն իր նշանակությամբ նախատեսված է գաղտնի աշխատանքների կատարման համար) տրամադրվում է վարձակալության հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (նաեւ էլեկտրոնային)) կամ ուղղակի եղանակով:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի նույն որոշման համաձայն՝ պետական ոչ առեւտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առեւտրային կազմակերպություններին եւ հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքը եւս տրամադրվում է վարձակալության հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (նաեւ էլեկտրոնային)) կամ ուղղակի եղանակով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հունգարիայի Սեգեդ քաղաքում 2023 թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 4-ը անցկացվել է Ինֆորմատիկայի միջազգային 35-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 89 երկրի 355 աշակերտ:

ՀՀ թիմից բրոնզե մեդալների են արժանացել Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի աշակերտներ Ծովակ Եգորյանը ու Սամվել Աբելյանը, ինչպես նաեւ «Քվանտ» վարժարանի աշակերտ Գագիկ Գեւորգյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+9 +13 / +26 +29	Արարատ	+18 +21 / +32 +34
Կոտայքի լեռներ	+9 +12 / +26 +29	Արմավիր	+17 +19 / +32 +34
Կոտայքի նախալեռներ	+17 +19 / +27 +29	Վայոց ձորի լեռներ	+9 +12 / +24 +26
Գեղարքունիք	+10 +14 / +21 +24	Վայոց ձորի նախալեռներ	+18 +21 / +32 +34
Լոռի	+8 +12 / +21 +26	Սյունիքի հովիտներ	+17 +21 / +26 +30
Տավուշ	+12 +16 / +25 +28	Սյունիքի նախալեռներ	+12 +14 / +22 +25
Արագածոտնի լեռներ	+9 +12 / +25 +28	ԼՂՀ	+17 +19 / +26 +30
Արագածոտնի նախալեռներ	+16 +20 / +27 +31	Երեւան	+19 +21 / +32 +34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*